ԷԼԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

«Էներգո Թրեյդ Սերվիս» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, 0029, Սիլիկյան թաղմ. 4 փ., տ. 9
Էլ. փոստ info@energytradearmenia.com

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն ընթացակարգը սահմանում է էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի կնքման ամբողջ գործընթացը, դրա փուլերի հաջորդականությունը, կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև Սպառողի հաշվեկշռման խմբում ընդգրկման կարգը: Կարգը սահմանում է նաև Սպառողի կողմից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանց ներկայացման ձևը և ժամկետները, ինչպես նաև Մատակարարի կողմից տվյալների ստուգման, հաստատման և պայմանագրի կնքման ընթացակարգային պահանջները:

Ընթացակարգը նպատակ ունի ապահովել գործընթացի թափանցիկությունը, միասնական մոտեցումը, իրավական հստակությունը և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրերի կնքման ընթացքում կողմերի գործողությունների կանխատեսելիությունը:

2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

- **Մատակարար՝** Էլեկտրական էներգիայի մատակարարման լիցենզիա ունեցող անձ.
- **Սպառող՝** Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը սպառում է էլեկտրական էներգիա,
- **Երաշխավորված մատակարար՝** էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարի լիցենզիա ունեցող անձ,
- **Բաշխող՝** Էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձ,
- Սեփական կարիքների բավարարման համար էլեկտրական էներգիա արտադրող իրավաբանական կամ ֆիզիկական անձ,
- **Շուկայի օպերատոր՝** Էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող անձ,
- **ԷՄԱ՝** ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հաստատած Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոններ:

3. ԳՈՐԾԱԾՄԱՆ ՈԼՈՐՏ

Ընթացակարգը կիրառվում է բոլոր այն դեպքերում, երբ Սպառողը դիմում է Մատակարարին՝

- **Երաշխավորված մատակարարից այլ Մատակարարի անցնելու նպատակով**, երբ Սպառողը ցանկանում է փոխել էլեկտրական էներգիայի մատակարարման ծառայության մատուցողին՝ ԷՄԱ կանոններով սահմանված կարգով: Այս գործընթացը ներառում է դիմումի ներկայացում, անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրում, ինչպես նաև Մատակարարի կողմից տվյալների ստուգում և հաստատում,
- **Գործող Մատակարարի փոփոխման համար**, երբ Սպառողը ցանկանում է վերանայել իր ներկայիս մատակարարման պայմանները կամ ընտրել այլ Մատակարար՝ սպառման, պայմանագրային կամ իրավական հիմքերի փոփոխության պատճառով: Մատակարարի փոփոխման գործընթացը ենթադրում է Սպառողի հաշվեկշռման

խմբում փոփոխություններ և համապատասխան փաստաթղթերի ներկայացում,

- **Նոր մատակարարման պայմանագիր կնքելու համար**, ներառյալ այն դեպքերը, երբ Սպառողը առաջին անգամ է դիմում էլեկտրական էներգիայի մատակարարման ծառայության համար, ինչպես նաև այն իրավիճակները, երբ անհրաժեշտ է կնքել նոր պայմանագիր՝ օբյեկտի շահագործման մեկնարկի, սեփականության իրավունքի փոփոխության, սպառման նոր կետերի ավելացման կամ այլ իրավական հիմքերի առաջացման դեպքում:

4. ԴԻՄՈՒՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ և ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳ

4.1. Սպառողը դիմում է Մատակարարին՝ նախատեսվող պայմանագրի կնքման ժամկետից առնվազն 10 (տաս) աշխատանքային օր առաջ՝ ներկայացնելով պահանջվող փաստաթղթերը:

4.2. Մատակարարը դիմումն ստանալուց հետո.

- Մատակարարման պայմանագիր կնքելու մտադրության բացակայության դեպքում՝ 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է Սպառողին,
- Մատակարարման պայմանագիր կնքելու մտադրության դեպքում՝ Սպառողին տրամադրում է.
  - ✓ Մատակարարի փոփոխման գործընթացի տևողության և պայմանների վերաբերյալ տեղեկատվություն,
  - ✓ Պայմանագրի օրինակելի ձևը,
  - ✓ Տեղեկացում երաշխավորված մատակարարումից հրաժարվելու հետևանքների մասին:

4.3. Սպառողը իրավունք ունի հրաժարվել դիմումից, եթե չի համաձայնում Մատակարարի ներկայացրած պայմաններին:

5. ՍՊԱՌՈՂԻՆ ՀԱՇՎԵԿՇՌՄԱՆ ԽՄԲՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ և ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ

5.1. Մատակարարը դիմում է Շուկայի օպերատորին՝ Սպառողին իր հաշվեկշռման խմբում ընդգրկելու հնարավորությունը պարզելու նպատակով:

5.2. Շուկայի օպերատորի դիրքորոշման հիման վրա.

- **դրական պատասխան** – Մատակարարը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում կնքում է պայմանագիր և տեղեկացնում Բաշխողին ու Շուկայի օպերատորին,
- **բացասական պատասխան** – Մատակարարը 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում գրավոր մերժում է Սպառողի դիմումը՝ ներկայացնելով հիմնավորումներ:

6. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

01 **Նախնական բանակցությունների իրականացում**

Կողմերը հստակեցնում են մատակարարման պայմանները, գները, ժամկետները և այլ էական դրույթները

02 **Պահանջվող փաստաթղթերի հավաքագրում**

Սպառողը ներկայացնում է իրավական, տեխնիկական և հաշվառման տվյալները՝ ըստ իր կարգավիճակի

03 **Հաշվեկշռման խմբում ընդգրկման ստուգում**

Մատակարարը դիմում է Շուկայի օպերատորին՝ Սպառողի ընդգրկման հնարավորությունը պարզելու համար

04 **Շուկայի օպերատորի դիրքորոշման ստացում**

Դրական կամ բացասական պատասխանն ուղղակիորեն ազդում է պայմանագրի կնքման հնարավորության վրա

05 **Պայմանագրի կնքում**

Դրական պատասխան ստանալու դեպքում կողմերը կնքում են գրավոր պայմանագիր՝ ներառելով բոլոր էական պայմանները

7. ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

7.1. Երաշխավորված մատակարարի սպառողների համար

- Բաշխողի հետ կնքված պայմանագրի պատճեն,
- Պետական գրանցման վկայական (կամ քաղվածք),
- Վավերապայմանները,
- Հաշվառքի սարքերի վերաբերյալ տեղեկատվություն,
- Դիմում՝ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

7.2. Ինքնավար էներգաարտադրողների համար

- Բաշխողի հետ կնքված պայմանագրի պատճեն,
- Փոխհոսքերի պայմանագրի պատճեն,
- Պետական գրանցման վկայական,
- Վավերապայմանները,
- Հաշվառքի սարքերի վերաբերյալ տեղեկատվություն,
- Դիմում՝ հաշվեկշռման խմբին միանալու վերաբերյալ:

7.3. Այլ մատակարարի սպառողների համար

- Բաշխողի հետ կնքված պայմանագրի պատճեն,
- Պետական գրանցման վկայական,
- Վավերապայմանները,
- Հաշվառքի սարքերի վերաբերյալ տեղեկատվություն,
- Նախորդ մատակարարի հետ պայմանագրի խզման ժամկետների վերաբերյալ տեղեկատվություն,
- Դիմում՝ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

8. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

8.1. Մատակարարի պատասխանատվությունը

Մատակարարը պատասխանատու է Սպառողի կողմից ներկայացված դիմումների պատշաճ ընդունման, դրանց ամբողջականության նախնական ստուգման և գործընթացի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության մատչելի ու ժամանակին տրամադրման համար: Մատակարարը պարտավոր է ապահովել Շուկայի օպերատորի հետ արդյունավետ հաղորդակցումը, ներառյալ՝ Սպառողի հաշվեկշռման խմբում ընդգրկման, փոփոխման կամ դուրսբերման վերաբերյալ տվյալների ճշգրիտ և ժամանակին փոխանցումը:

Մատակարարը պատասխանատու է նաև ընթացակարգի սահմանված ժամկետների պահպանման, Սպառողի դիմումների մշակման ընթացքում առաջացող տեխնիկական կամ կազմակերպչական խնդիրների արագ արձագանքման և դրանց լուծման ապահովման համար: Մատակարարը պարտավոր է գործել օրենքով սահմանված պահանջներին համապատասխան՝ ապահովելով գործընթացի թափանցիկությունը, կանխատեսելիությունը և Սպառողի իրավունքների պաշտպանությունը:

8.2. Սպառողի պատասխանատվությունը

Սպառողը պատասխանատու է Մատակարարին ներկայացվող փաստաթղթերի, տվյալների և հայտարարությունների ճշգրտության, ամբողջականության և իրավական համապատասխանության համար: Սպառողը պարտավոր է ապահովել, որ ներկայացվող տեղեկատվությունը հավաստի է և չի պարունակում սխալ կամ մոլորեցնող տվյալներ, որոնք կարող են ազդել մատակարարման պայմանագրի կնքման կամ հաշվեկշռման խմբում ընդգրկման գործընթացի վրա:

Սպառողը պատասխանատու է նաև պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման, ինչպես նաև այն բոլոր փոփոխությունների մասին Մատակարարին ժամանակին տեղեկացնելու համար, որոնք կարող են ազդել մատակարարման պայմանների, հաշվեկշռման խմբի կամ պայմանագրային հարաբերությունների վրա:

9. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ընթացակարգը կարող է վերանայվել, փոփոխվել կամ թարմացվել այն դեպքերում, երբ փոփոխվում են էլեկտրական էներգիայի շուկայի կանոնները, ոլորտը կարգավորող իրավական ակտերը, ինչպես նաև Մատակարարի կամ Ընկերության ներքին քաղաքականությունները, ընթացակարգերը կամ տեխնիկական պահանջները:

Ընթացակարգի փոփոխությունները ուժի մեջ են մտնում դրանց պաշտոնական հաստատումից և հրապարակումից հետո, եթե այլ ժամկետ չի սահմանվել համապատասխան իրավական կամ ներքին ակտով: Մատակարարը պարտավոր է ապահովել փոփոխությունների մասին Սպառողների պատշաճ իրազեկումը:

Ընթացակարգի դրույթների մեկնաբանման, կիրառման կամ դրանցից բխող հարցերի դեպքում կողմերը առաջնորդվում են գործող օրենսդրությամբ, էլեկտրական էներգիայի շուկայի կանոններով:

Ընթացակարգում չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և էլեկտրական էներգիայի շուկայի գործող կանոններով: